



ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

*ՀՊՏՀ բիզնեսի կազմակերպման ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու*

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՈՐՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ծառայությունների ոլորտի գործառույթների կարևորությամբ, դրանց անհամատարրությամբ են պայմանավորված ինչպես սպասարկման ոլորտի վրա պետության ազդեցության անհրաժեշտությունը, այնպես էլ դրա ծավալը, եղանակները, միջոցները: Ինչպես ցույց է տալիս զարգացած երկրների փորձը, այս ոլորտում պետության պատշաճ միջամտությունը, որն արդարացված է ընդհանուր տնտեսական և սոցիալ-քաղաքական նշանակության մի շարք խնդիրների լուծման առումով, ապահովում է զգալի դրական արդյունք:

Մինչ ծառայությունների ոլորտի՝ որպես պետական կարգավորման օբյեկտի դիտարկումը, հակիրճ բնութագրենք տնտեսության պետական կարգավորման մեթոդների ու միջոցների բովանդակությունը՝ հիմնավորելով նաև դրանց անհրաժեշտությունը:

Վերջին տարիների գիտական գրականության մեջ առավել ընդունված են հետևյալ բնորոշումները. «Տնտեսության պետական կարգավորումը օրենսդրական, գործադիր և վերահսկող բնույթի միջոցառումների համակարգ է, որ իրականացվում է իրավասու պետական և հասարակական կազմակերպությունների կողմից սոցիալ-տնտեսական համակարգը փոփոխվող պայմաններին հարմարեցնելու նպատակով», «Տնտեսության պետական կարգավորումը շուկայական մեխանիզմի բնականոն գործունեության ապահովման և սոցիալական ու բնապահպանական խնդիրների լուծման նպատակով տնտեսավարող սուբյեկտների գործունեությանը և շուկայական կոնյունկտուրային պետության միջամտությունն է»¹:

¹ Вечканов Г., Вечканова Г., Современная экономическая энциклопедия. СПб.: Лань, 2000, с. 113.

Ուստի տնտեսագետ Ա. Նեստերովայի կարծիքով՝ շուկայական տնտեսության պետական կարգավորումը պետության նպատակաուղղված ազդեցությունն է տնտեսության զարգացման միկրո- և մակրոգործընթացների վրա՝ դրանց կայունության ապահովման կամ հասարակության համար նպաստավոր ուղղությամբ փոփոխման նպատակով²: Հայ տնտեսագետների մի խումբ տնտեսության պետական կարգավորումը կարևորում է գնային քաղաքականության և պետական վերահսկողության առումով. «Պետական կարգավորումը, որը տարածվում է գնի մակարդակի, շուկա ներթափանցելու աստիճանի և առանձին հատվածներում (օրինակ, էլեկտրացանցում) արտադրանքի որակի վերահսկողության վրա»³:

Տնտեսության կարգավորման նպատակով պետությունը կիրառում է և՛ վարչական, և՛ տնտեսական մեթոդներ:

Հակիրճ անդրադառնալով տնտեսության պետական կարգավորման վարչական մեթոդներին՝ նշենք, որ դրանք կիրառվում են պետության իշխանական ուժի կողմից և ներառում են հարկադրանքի միջոցներ՝ արգելքների և որոշակի սահմանափակումների տեսակներ, որոնք ձևավորում են տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակը: Դրանք հիմնված են սեփականությունը, գործարքները, պայմանագրերն ու պարտավորությունները, սպառողների իրավունքների պաշտպանությունը, աշխատանքն ու սոցապահովությունը, բնության պահպանությունը, հարկերը, մենաշնորհային գործունեությունը կարգավորող և պաշտպանող տնտեսական և վարչական օրենսդրությունների վրա:

Պետական կարգավորման *տնտեսական մեթոդները* նախատեսում են տնտեսավարող սուբյեկտի գործունեության տեսակի և ձևի ազատ ընտրության ապահովում: Դրանք ենթադրում են սուբյեկտների տնտեսական շահերի պետական հսկողություն, այնպիսի վարքի ընտրության նյութական շահագրգռվածության ստեղծում, որը կնպաստի պետական քաղաքականության իրագործմանը:

Ընդունված է տարբերակել պետական ներգործության ուղղակի և անուղղակի մեթոդներ, ըստ որում մի շարք հեղինակներ ուղղակի մեթոդները հիմնականում դասում են վարչական, իսկ անուղղակիները՝ տնտեսական մեթոդների շարքը⁴: Որոշ հեղինակներ էլ համարում են, որ տնտեսական մեթոդներն են ստորաբաժանվում ուղղակի և անուղղակի տեսակների⁵, որը, կարծում ենք, ավելի ճիշտ է, քանի որ, ի տարբերություն իրենց բնույթով կտրուկ վարչական մեթոդների, որոնք ենթադրում են պետական ներգործության ուղղակի ձև, տնտեսական մեթոդները պայմանավորված են տնտեսական բազմագործառույթ համակարգերի գործունեությամբ, դրանց բազմատարր լիազորություններով, ուստի հանգեցնում են պետական ներգործության և՛ ուղղակի, և՛ անուղղակի եղանակների կիրառության:

² Տե՛ս **Нестерова А.**, Государственное регулирование экономики, Курс лекций /Калинингр. ун.-т./, Калининград, էջ 15:

³ **Գ. Կիրակոսյան, Զ. Ղուլչյան, Ի. Տիգրանյան**, Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., «Տնտեսագետ», 1999:

⁴ Տե՛ս Государственное регулирование экономики: учебное пособие для вузов /**Морозова Т., Дурдыев Ю., Тихонов В.**/, М., «ЮНИТИ-ДАНА», 2001, էջ 16-17: Государственное регулирование рыночной экономики: учебное пособие, 2-е изд. М., «Дело», 2002, էջ 43:

⁵ Տե՛ս **Ефимова Е.**, Экономическая теория в схемах, таблицах, графиках и формулах: учебное пособие. М., «Флинта», Московский психолого-социальный институт, 2003, էջ 15:

Պետական միջամտության տարբեր մեթոդներ կիրառվում են բազմաթիվ միջոցներով և եղանակներով, այն է.

- լիցենզավորում, կանոնակարգում, հակամենաշնորհային արգելքներ, քվոտավորում, ստանդարտների, նորմատիվների սահմանում,
- պետական պատվերներ, փոխառություններ, նպաստներ և լրավճարներ,
- կանխատեսումների, պլանների, ծրագրերի մշակում,
- հարկերի, հարկային արտոնությունների, մաքսատուրքերի, հաշվարկային դրույքաչափերի, պարտադիր պահուստային պաշարների նորմատիվների սահմանում, արտարժույթային ներխուժումներ⁶ և այլն:

Ակնհայտ է, որ ծառայությունների ոլորտի արդյունավետ գործունեության ապահովման և զարգացման խնդիրներն անհնար է լուծել առանց պետական կարգավորման: Ցավոք, ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ այս հարցն ամբողջապես լուսաբանված չէ. առկա են միայն քննարկվող որոշակի հարցերի հատվածական շարադրման փորձեր: Եվ սա այն դեպքում, երբ ծառայությունների ոլորտը շուկայական տնտեսության պայմաններում ազգային և համաշխարհային տնտեսության կարևորագույն մասն է:

Ռուս տնտեսագետների մի խումբ⁷ առանձնացնում է ծառայությունների ոլորտում պետական միջամտության անհրաժեշտությունը պայմանավորող հետևյալ 4 պատճառները.

1. Ծառայությունների տարբեր բնագավառներում շուկայական հարաբերությունների զարգացման աստիճանի օբյեկտիվ տարբերությունը: Անվիճելի է, որ ոչ միայն ՌԴ-ում, այլև մեր երկրում ծառայությունների առանձին ոլորտներում (ռեստորանային, զբոսաշրջային, հյուրանոցային, գովազդային գործարարություն, առևտուր, շոու բիզնես) շուկայական հարաբերությունների զարգացմամբ ստեղծվել է պահանջարկի բավարարման, շահույթի ստացման արդյունավետ մեխանիզմ: Մինչդեռ, մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների ապահովման գործում հսկայական նշանակություն ունեցող սպասարկման բնագավառներում շուկայական հարաբերությունները որոշակիորեն սահմանափակված են, քանի որ այս ոլորտներում անցումը զուտ շուկայական տնտեսավարման, բնակչության մեծ մասի համար կոժվարացնի կամ անհնար կդարձնի այդ ծառայություններից օգտվելը: Խոսքը հիմնականում կրթական, բուժապասարկման, մշակութային ծառայությունների մասին է: Հետևաբար՝ պետության դիրքորոշումն այս հարցում, որպես կանոն, ակտիվ է:

2. Պետությունն ապահովում է հասարակական բարիքները՝ կարգավորելով դրանց առաջարկը: Այդ բարիքներին վերաբերող ծառայությունների առանձնահատկությունը (անբաժանելիություն, անբացառելիություն, նորմավորման դժվարություն) հանգեցնում է սպառողների՝ դրանց «վճարման» պարտադրմանը (հարկերի գանձման ձևով):

⁶ Արտարժույթի շուկայի և կուրսի վրա երկրի Կենտրոնական բանկի նպատակաուղղված ուժեղ ազդեցություն, որն իրագործվում է բանկի կողմից արտարժույթի խոշոր խմբաքանակների առջև կան վաճառքի միջոցով: *Արտարժույթի ինտերվենցիան* կատարվում է արտարժույթի կուրսի կարգավորման համար, ինչը բխում է պետության շահերից:

⁷ Տե՛ս Сфера услуг: Экономика, менеджмент, маркетинг: Практикум, под ред. Бурменко Т., учебное пособие. М., „КНОРУС“, 2010, էջ 253:

3. Գործում են արտաքին էֆեկտներ (հատկապես բացասական)՝ կապված շուկայի գործառնությունների ծախսողունների հետ: Անհրաժեշտ է նման էֆեկտներ առաջացնող գործունեության կոշտ կարգավորում (սեփականության իրավունքի պատշաճ ձևակերպում և ոլորտի գործունեության բացասական արդյունքների ու խախտումների դեպքում պատասխանատվության ապահովում):

4. Պետության միջամտության անհրաժեշտությունը օբյեկտիվորեն կապված է նաև այն հանգամանքի հետ, որ մի շարք ծառայությունների դեպքում հենց պետությունն է հանդես գալիս որպես մենաշնորհատեր (կոմունալ-կենցաղային ծառայություններ, փոստային կապ, մաքսային գործունեություն, լիցենզավորում և այլն):

Ժամանակակից պայմաններում ծառայությունների ոլորտը՝ որպես տնտեսության էապես կարևոր հատված, շատ երկրներում մեծ ազդեցություն ունի բնակչության ապրելակերպի վրա, ինչով էլ, մեր կարծիքով, պայմանավորված է այդ բնագավառում պետության դերի մեծացումը:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, ծառայությունների ոլորտում պետական միջամտության բարձր մակարդակը պայմանավորված է նրանով, որ բնագավառի զարգացումը ազգային քաղաքականության առաջնային ուղղություններից մեկն է:

Պետությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում այս բնագավառին, քանի որ այն որոշակիորեն ապահովում և արտացոլում է ազգի սոցիալ-տնտեսական բարեկեցության վիճակը: Դրա վերահսկողությունն անհրաժեշտ է սպառողների շահերի պաշտպանության համար: Պետական ակտիվ գործունեությամբ է հնարավոր այդ շուկայի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ապահովել (դրա բացակայությունը սահմանափակում է սպառողական ընտրությունը):

Ծառայությունների ոլորտի սոցիալ-տնտեսական գործընթացների պետական կարգավորումն ունի հատուկ նպատակներ: Դրանցից կարելի է առանձնացնել.

1. առաջընթացի, զարգացման տեմպի ապահովում,
2. բարեխիղճ մրցակցության պայմանների ստեղծում,
3. ձեռնարկատիրության զարգացման խթանում,
4. արտադրության և սպասարկման բնագավառներում մասնավոր և հասարակական հատվածների հարաբերակցության կարգավորում,
5. ծառայությունների արտահանման ներուժի աճի ապահովում:

Ամերիկացի հայտնի տնտեսագետներից մեկը՝ Ջ. Ստիգլիցը, «Պետության տնտեսական դերը» աշխատության մեջ գրում է. «Պետական միջամտության որոշում կայացնելիս անհրաժեշտ է սահմանել հետևյալ այլընտրանքները. ա) մասնավոր արտադրողների մասնակցությամբ պետական արտադրություն կամ պետական ապահովվածություն, բ) ուղղակի վերահսկողություն (կապված պետական արտադրության հետ) կամ անուղղակի վերահսկողություն (պետական կազմակերպությունների կողմից կարգավորման կամ մրցակցության միջոցով)»⁸: Ծառայությունների բնագավառում, որտեղ միշտ առանձնացվում է երեք կառուցամաս՝ ծառայությունը որպես զուտ հասարակական բարիք, բնական մենաշնորհի ծառայություն, ծառայությունը որպես մասնավոր բարիք, որոնք պայմանավորում են պետական կարգա-

⁸ Stiglitz J., On the economic role of the state. Oxford, 1989, p. 41.

վորման բնույթը, Ստիգլիցի նշած այլընտրանքներն առավել կարևոր են: Դրանց կշռադատված ընտրությունը շատ դեպքերում ապահովում է ազգային տնտեսության սոցիալ-տնտեսական արդյունավետության անհրաժեշտ մակարդակը:

Թեև տարբեր երկրների ծառայությունների ոլորտում պետական միջամտության հիմնական ուղղվածությունը նույնն է, սակայն խնդիրները, ծավալները, հնարավորությունները տարբեր են՝ կապված պատմական պայմանների, ինչպես նաև տնտեսական շրջափուլի հետ: Կարևոր գործոն է երկրի և դրա տնտեսական մոդելի զարգացման մակարդակը: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա, մասնագետների կարծիքով, հայաստանյան սպասարկման ոլորտը, ընդհանուր առմամբ, բնութագրվում է որպես նոր զարգացող⁹: Այս առումով, պահանջվում է պետության հավասարակշռված և համալիր միջամտություն հիմնված համապատասխան հայեցակարգի վրա:

ՀՀ-ում առաջնային է սպասարկման ոլորտի գործունեությունը կարգավորող համակարգված օրենսդրության ստեղծումը, փոքր գործարարության զարգացման խթանումը, հասարակական բարիքների արտադրության ապահովումը, ծառայությունների արտաքին տնտեսական շրջանառության կարգավորումը:

Ներկայումս մեր երկրում անհրաժեշտ է օբյեկտիվորեն ընդլայնել սպասարկման տարբեր ճյուղերում քաղաքացիաիրավական նորմերով կարգավորող ծառայությունների (առաջին հերթին՝ տնտեսական) շրջանակը: Քանի որ, որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ծառայություններն ի հայտ են եկել շուկայական տնտեսավարման հետ կապված, ծառայությունների ոլորտի իրավական կարգավորումը և այս բնագավառում շուկայական հարաբերությունների զարգացման աստիճանը դեռևս բավարար չեն:

Ի դեպ, ո՛չ օրենսդրության, ո՛չ էլ տնտեսագիտական գրականության մեջ չկա «ծառայություն» հասկացության հստակ սահմանում: ԱՀԿ ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի (GATS) մշակման ժամանակ անգամ միջազգային հայտնի մասնագետների ջանքերը չեն հանգեցրել նշված հասկացության բնորոշմանը: Օրենսդրությամբ (այդ թվում՝ հայրենական) ծառայությունների մատուցման և դրանց իրավական կարգավորման եղանակներին վերաբերող մեթոդային վերջնական դիրքորոշումը ճշգրտված չէ, ինչը որոշակիորեն խանգարում է սպասարկման տարբեր բնագավառների զարգացմանը և սպառողների իրավունքների պաշտպանությանը:

Փոքր գործարարությունը նույնպես կարևոր նշանակություն ունի ծառայությունների ոլորտի զարգացման և գործունեության ձկունության, ոլորտում սպառողական պահանջարկի առավելագույն բավարարման և բնակչության զբաղվածության ապահովման գործում: Հետևաբար՝ փոքր բիզնեսի զարգացման խթանումը ևս պետության կարևորագույն խնդիրն է, մանավանդ որ պետական կարգավորման համակարգի նպատակը ՓՄՁ միջավայրի արդյունավետ ու կայուն զարգացման տնտեսական և կազմակերպչական խնդիրների լուծումն է, որը պայմանավորված է ոչ միայն գործադիր, այլ նաև օրենսդիր և դատական իշխանության մարմինների նպատակաուղղված գործունեությամբ:

⁹ Տե՛ս www.armenpress.am/arm/news/688430, www.hayatsk.am/3960.html, www.panarmenian.net/arm/news/124109/

Հարկային արտոնությունները, արտոնյալ ֆինանսավորումը և պետական աջակցության այլ ավանդական եղանակները, մեր կարծիքով, պետք է ուղղվեն հիմնականում փոքր ձեռնարկությունների գործունեության զարգացմանը:

Պետությունը պետք է նպաստի ֆրանչայզինգի պայմանագրային հարաբերությունների ընդլայնմանը, քանի որ դա, որպես ծառայությունների ոլորտում համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվություն, օգտագործողին (ֆրանչայզի) հնարավորություն է տալիս իրավատիրոջ (ֆրանչայզեր) գործարար համբավի, առևտրային փորձի և բացառիկ իրավունքների (ֆիրմային անվանում, առևտրային տեղեկատվություն, ապրանքային նշան, սպասարկման նշան, արտոնագրային իրավունք) իրացում (պայմանագրով սահմանված ծավալով) ձեռնարկատիրական գործունեության որոշակի ոլորտում՝ իրականացնելով իրավատիրոջից ստացված կամ իր օգտագործողի արտադրած ապրանքների վաճառք, մատուցելով վճարովի ծառայություններ, կատարելով աշխատանքներ ու այլ առևտրային գործունեություն:

Փոքր գործարարությունում ֆրանչայզինգի պայմանագրային հարաբերությունների ընդլայնումը շահավետ կլինի, քանի որ.

- ա) այդ պայմանագիրը նոր ժամկետով կնքելիս օգտագործողն ունի նախապատվության իրավունք,
- բ) պայմանագրի ուժը պահպանվում է կողմերի փոփոխության դեպքում,
- գ) օգտագործողի կողմից վաճառվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների որակի վերաբերյալ խնդիրներ առաջանալու դեպքում իրավատերը ևս պատասխանատվություն է կրում,
- դ) արգելված չէ համալիր ենթաթույլտվությունը:

Պետությունը պետք է նպաստի նաև պետական և մունիցիպալ կարիքների համար փոքր կազմակերպություններին ծառայությունների պատվերների տրամադրման համակարգի կատարելագործմանն ու հետագա զարգացմանը:

Պետական պատվերը տնտեսական կապերի ուղղակի կարգավորման ձև է: Արտադրողի համար պետական պատվերի շահավետությունն ապահովվում է.

1. պայմանագրային գին սահմանելու հնարավորությամբ,
2. զլխավոր համաձայնագրով որոշված ապրանքների և ծառայությունների անվանացանկին համապատասխան բաշխված պետական պատվերի ապահովման նյութական ռեսուրսներով:

Տնտեսապես զարգացած շատ երկրներում արդյունավետ են գործում տարատեսակ վճարովի ծառայությունների պատվերի և գնումների պայմանագրային համակարգերը: Որպես օրինակ կարող է ծառայել ԱՄՆ-ի տնտեսական օրենսդրությամբ կարգավորվող և անընդհատ կատարելագործվող դաշնային պայմանագրային համակարգը: ԱՄՆ-ի դաշնային պայմանագրային համակարգի (ստեղծվել է 1921 թ.) գործունեությունը կարգավորվում է պետական պատվերի դաշնային կանոններով (FAR): Դրանք բաղկացած են պետական պատվերի պլանավորման, տեղաբաշխման և կատարման շրջափուլը մանրամասնորեն կանոնակարգող ավելի քան 4.5 մլն նորմերից ու կանոններից: Այսօր ԱՄՆ-ում պետպատվերի շրջանակներում շրջանառվող բյուջետային միջոցների հոսքերը կազմում են շուրջ 500 մլրդ դոլար:

Պետպատվեր տրամադրվում է ավելի քան 160 հազար առևտրային ընկերությունների: ԱՄՆ-ի դաշնային պայմանագրային համակարգի գործունեությունը համակարգում է ԱՄՆ-ի պետպատվերի գրասենյակը, որը ստեղծվել է 1974 թ.:¹⁰ որպես ԱՄՆ-ի վարչական-բյուջետային վարչության ստորաբաժանում¹⁰:

Պետությունն է հասարակական բարիքներ ապահովող հիմնական սուբյեկտը, ուստի կրթության զարգացումը, կոլեկտիվ անվտանգության ապահովումը, ոլորտի կազմակերպություններին համապատասխան սարքավորումների տրամադրումը, սոցիալական ապահովությունը, ենթակառուցվածքի զարգացման խոշորածավալ աշխատանքները հատուկ հոգածության առարկա են: Ընդ որում, կարևոր դեր են խաղում ծառայությունների առաջարկի ու պահանջարկի մեծացման նպատակով պետության կողմից նպաստների օգնությամբ իրականացվող միջոցառումները: Նպաստների տրամադրումը լայն կիրառություն ունի բնակչությանը սպասարկող սոցիալ-մշակութային, բնակկոմունալ կազմակերպությունների կողմից:

Ինքնին հասկանալի է, որ բոլոր երկրներում մշտապես կարևորվում է անհրաժեշտ սոցիալական բարիքների ապահովման խնդրի լուծումը, քանի որ այդպիսի բարիքների պետական արտադրության չափազանց ընդլայնումը կամ կրճատումը կարող են երկարաժամկետ բացասական հետևանքների պատճառ դառնալ: Տնտեսության պետական կարգավորման պատշաճ մակարդակի ապահովումը ևս մշտական գործընթաց է, ինչը ժամանակ առ ժամանակ բարեփոխումների անհրաժեշտություն է առաջացնում (մասնավորապես առողջապահության, կրթության ոլորտներում):

Մի շարք տնտեսագետներ արդիական են համարում պետական ձեռնարկատիրության կանոնակարգման խնդիրը, այդ թվում ծառայությունների բնագավառում, քանի որ դա ներկայումս տնտեսության արդյունավետ գործունեության առումով պետության ազդեցության կարևոր ձևերից մեկն է: Միևնույն ժամանակ, զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ «...նույնիսկ հասարակական բարիքների տրամադրումը բավարար հիմք չէ պետության՝ դրանց ապահովման պարտականությունն իր վրա վերցնելու համար: Պետությունը կարող է ֆինանսավորել այդ գործընթացը, ոչ թե դրան մասնակցել ուղղակիորեն»¹¹:

Տնտեսության պետական և մասնավոր հատվածների հարաբերակցությունը, դրանց փոխգործակցությունը միշտ եղել են պետական կարգավորման օբյեկտ: Որպես կանոն, քաղաքակիրթ պետություններում հաշվի է առնվում բնակչության կարծիքը, քանի որ հենց նա է պետական հատվածի գործունեության գնահատողը և հիմնական հարկատուն:

Պետության դերը մեծ է նաև արտաքին առևտրի ծառայությունների կարգավորման գործում: Այս ոլորտի արտահանվող ներուժի ձևավորման և մեծացման գործում առաջատար դիրք պետք է ունենա երկրի կառավարությունը՝ հատկապես մասնավոր հատվածի զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու գործում:

Նշված բնագավառում գործունեությունը կարգավորելու նպատակով պետությունը, կարծում ենք, պետք է իրականացնի հետևյալ միջոցառումները.

¹⁰ Տե՛ս www.terra-america.ru/federalnaya-kontraktная-sistema-usa

¹¹ Տե՛ս **Дойников И.**, Государственное предпринимательство/учеб./ М., „ПРИОР“, 2000, էջ 73:

- ծառայությունների որոշակի հատվածի համար սահմանել օտարերկրյա ներդրումների առավելագույն մակարդակ,
- մշակել օտարերկրյա ընկերությունների հիմնադրման և գործունեության կանոնները,
- սահմանափակել օտարերկրյա ներկայացուցչությունների քանակը, հայրենական ընկերությունների կապիտալում դրա կապիտալի մասնաբաժինը, օտարերկրյա աշխատողների թիվը,
- քվոտաներ կիրառել հատուկ արտադրանքի, ծառայությունների նկատմամբ կամ սահմանափակել ծառայությունների արտահանման համար տրամադրվող արտարժույթի ծավալը,
- ներմուծվող ծառայությունների համար սահմանել դրույքաչափեր, նվազագույն գներ կամ հարկեր,
- կանոնակարգել այլ երկրներ ֆինանսական միջոցների փոխանցման պայմանները,
- ներդնել ծառայությունների ազգային մատակարարների արտասահման մեկնելու փաստաթղթերի ձևակերպման կանոնները, բարդացնել տվյալ երկիր ծառայությունների օտարերկրյա մատակարարների մուտքի դեպքում նույն գործընթացը և այլն:

2003 թ. ԱՀԿ-ին պաշտոնապես անդամակցող մեր երկրում վճարովի ծառայությունների ոլորտում նման միջոցառումների կիրառումը ևս կհանգեցնի առկա հիմնախնդիրների շահավետ լուծմանը, կապահովի պետական վերահսկողական ձեռնարկումների բարենպաստ զուգորդում և ծառայություններ մատուցող հայրենական ու արտասահմանյան կազմակերպությունների շահավետ գործունեության մրցակցային պայմաններ:

Պարզ է՝ եթե ՀՀ-ն զարգացնի վճարովի ծառայությունների շուկան՝ հենվելով բացառապես ազգային ռեսուրսների կամ հայրենական շուկա օտարերկրյա մատակարարների մուտքի սահմանափակման վրա, երկրում ծառայությունների ոլորտի զարգացման մակարդակը չի համապատասխանի միջազգային չափանիշներին: Դա բացասաբար կանդրադառնա նաև տնտեսական աճի վրա:

Օտարերկրյա կապիտալի ներհոսքի շնորհիվ հայաստանյան գործարարությունը կստանա զարգացման համար խիստ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, ծառայությունների իրացման ու կառավարման առաջնակարգ տեխնոլոգիաներ, և արդյունավետ մեթոդների օգնությամբ կապահովվի հաճախորդների սպասարկման բարձր մշակույթ:

Պետք է նշել սակայն, որ վճարովի ծառայությունների ոլորտում պետության կարգավորիչ միջոցառումները պետք է ունենան որոշակի սահմաններ. ոչ բավարար միջամտությունը կամ տվյալ բնագավառի չափազանց ընդլայնումը կարող են վատթարացնել բնակչության խոցելի խավի վիճակը՝ նվազեցնելով կենսական նշանակություն ունեցող ծառայությունների հասանելիության աստիճանը: Դա կառաջացնի խնամառություն, պակասուրդ, պետական ֆինանսական միջոցների անբավարարություն: Սակայն պետական և մասնավոր հատվածների, տնտեսավարման տարբեր ձևերի ու մեթոդների արդյունավետ համակցումը ծառայությունների ոլորտում կապահովի ճկունություն, հասանելիություն, համախառն պահանջարկի ու առաջարկի ավելի մեծ համապատասխանություն:

Այս բնագավառում տնտեսավարող սուբյեկտների գործունեության պետական կարգավորումն անհրաժեշտ է ոչ միայն հենց բուն ձեռնարկատիրական գործունեության կազմակերպմամբ, այլև համապատասխան պետական վերահսկողության հիմնախնդրով պայմանավորված, որի արդյունավետ ու արդար լուծումը պահանջում է նաև պետական երաշխիքներ, մասնավորապես.

1. ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների օրինական շահերի պաշտպանություն և հավասար պայմանների ապահովում,
2. առանձին ապրանքների ու ծառայությունների մենաշնորհային դիրքի բացառում շուկայում,
3. անբարեխիղճ մրցակցության արգելք,
4. ձեռնարկատիրական ռիսկի հնարավոր ապահովագրում,
5. աջակցություն գիտատեխնիկական և օրենսդրական հարցերում:

Ամփոփելով կարող ենք ընդգծել, որ ծառայությունների ոլորտի հետագա շահավետ զարգացումը հնարավոր է միայն պետական կարգավորմամբ, որը պետք է իրականացվի առաջին հերթին օրենսդրական և համարժեք վերահսկողական գործառույթներով, ինչպես նաև տնտեսական չափորոշիչներ ու գործառնական չափանիշներ սահմանելով, տեղեկատվական համակարգեր ապահովելով:

ТАТЕВИК МКРТУМЯН

*Доцент кафедры „Организации бизнеса”
АГЭУ, кандидат экономических наук*

Роль государства в регулировании в сфере услуг. - Важность выполняемых функций в сфере услуг, ее неоднородность определяют как необходимость государственного воздействия на указанную сферу, так и его масштабы, способы, инструменты. Разумное вмешательство государства в функционирование сферы услуг, оправданное с точки зрения ряда критериев общехозяйственного и социально-политического значения, дает, как показывает практика развитых стран, ощутимые положительные результаты.

Для современной Армении наиболее острыми проблемами в области госрегулирования сферы услуг выступают создание системной правовой базы, стимулирование развития малого бизнеса, обеспечение производства общественных благ и формирование современной структуры государственного предпринимательства, регулирование внешнеэкономического оборота услуг.

В каждом случае регулирующее влияние государства на развитие сферы услуг должно иметь определенные пределы, поскольку недостаточная мера такого воздействия, т.е. расширение области платных услуг, ставит в ущемленное положение уязвимые слои населения, преграждая им доступ к жизненно важным видам услуг. Чрезмерное государственное вмешательство порождает иждивенчество, дефицит, растущую нехватку финансовых средств у государства. Оптимальное же сочетание государственного и частного секторов, различных форм и методов введения хозяйственной деятельности обеспечит сфере услуг гибкость, доступность, большее соответствие совокупного спроса и совокупного предложения.


TATEVIK MKRTUMYAN

*Associate Professor at the Chair of
„Organisation of Business” at ASUE, PhD in Economics*

The Role of Government in the Regulation of Service Sector. - The importance of the functions performed by the service sector, its heterogeneity is defined as the need for public exposure to the specified scale and its scope, methods, tools. Prudent government interference in the operation of the service sector, justified in terms of the number of criteria of general economic and socio-political values, gives, as the experience of developed countries shows, tangible positive results.

For most of modern Armenia's acute problems in the field of regulation of the service industry is the creation of a system framework, encouraging the development of small business, providing public goods and the formation of the modern state business structure, regulation of foreign trade turnover of services.

In each case, the regulating influence of the state on the development of services must have certain limits as a measure of the lack of such effects, that is expansion of paid service, put in the pinch condition vulnerable groups of the society, blocking their access to vital types of services. Excessive government intervention creates dependency, the deficit, the growing shortage of financial resources on the state. The mix of public and private sectors is optimal. Various forms and methods of doing business will provide the service flexibility, availability, greater conformity to aggregate demand and aggregate supply.



ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ- ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՋՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ջրոսաշրջությունը ազատ ժամանակ բնակության մշտական վայրից դեպի այլ վայր մարդկանց ժամանակավոր տեղաշարժն է հանգստի, առողջության վերականգնման, ճանաչողական, կրոնական, գործնական և այլ նպատակներով՝ բացառելով այցելության վայրում վճարովի աշխատանքով զբաղվելը¹: Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության հիմքում առողջարաններ այցելությունն է՝ համապատասխան բուժում ստանալու և հանգստանալու համար:

ՀՀ-ում զբոսաշրջության, այդ թվում նաև առողջարանային զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է: Վերջինիս կազմում գործում է զբոսաշրջությունն անմիջականորեն կարգավորող մարմինը՝ զբոսաշրջության և տարածքային տնտեսական զարգացման վարչությունը, որը մշակում և իրականացնում է զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականությունը:

Բնագավառի պետական քաղաքականության նպատակները սահմանված են «Ջրոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով և 2008 թ. փետրվարի 13-ին ՀՀ Կառավարության հավանության արժանացած «Ջրոսաշրջության զարգացման հայեցակարգով»:

«Ջրոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները՝

1. ճանաչել զբոսաշրջությունը՝ որպես տնտեսության գերակա ճյուղ,

¹ Տե՛ս **Биржаков М., Никифоров В.**, Индустрия туризма: перевозки. СПб.: Издательский дом „Герда“, 2007, էջ 16:

2. աջակցել զբոսաշրջային գործունեությանը և դրա առաջնային ուղղությունների զարգացման համար ստեղծել բարենպաստ իրավական, տնտեսական և կառուցվածքային պայմաններ,
3. սահմանել զբոսաշրջության զարգացման գերակա ուղղությունները,
4. իրականացնել Հայաստանի Հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորումը,
5. ստեղծել պայմաններ զբոսաշրջիկների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար,
6. իրականացնել զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովումը,
7. աջակցել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից օրենքով սահմանված կարգով ստեղծված հասարակական միավորումներին²:

Ջբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակներից է Հայաստանում առաջնային զարգացման ենթակա բնական, սոցիալ-մշակութային և առողջարանային ռեսուրսներով հարուստ զբոսաշրջային տարածաշրջանների և/կամ կենտրոնների զարգացման ապահովումը:

Ջբոսաշրջության զարգացման տարեկան ծրագրերի մարքեթինգային քաղաքականությունից բխող միջոցառումներն իրականացնում է Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը:

ՀՀ-ում առողջարանները, որպես հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որակավորվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության լիցենզավորման և թույլտվությունների գործակալության կողմից: Ըստ «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2004 թ. N946-Ն որոշման՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտները, կամավորության սկզբունքով, կարող են ստանալ որակավորման կարգ: «Ջբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում որակավորում կարող են ստանալ հյուրանոցային տնտեսության այն օբյեկտները, որոնք բավարարում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային նվազագույն պահանջները: Հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգ ստանալու նպատակով իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը որակավորող մարմին է ներկայացնում հայտ, որտեղ նշվում են հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակն ու ակնկալվող որակավորման կարգը³: Առողջարանները որակավորվում են 1, 2, 3 և 4-աստղանի կարգերով, որոնք նշվում են հնգաթև աստղերով: Որակավորմանն առաջադրվում են մի շարք պահանջներ, որոնք վերաբերում են արտաքին բարեկարգմանը, տեխնիկական սարքավորումներին և հարմարանքներին, օբյեկտի գործարկմանը, սպասարկմանը և շահագործմանը վերաբերվող հիմնական տարրերին, բնակելի մասին, հիմնական և լրացուցիչ ծառայություններին, անձ-

² Տե՛ս «Ջբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 2003 թ., հոդված 4:

³ Տե՛ս Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգ, ՀՀ Կառավարության 2004 թ. հունիսի 10-ի N946-Ն որոշման հավելված N1:

նակագմի մասնագիտական որակավորմանը⁴: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված են զբոսաշրջության բնագավառում լիցենզիաներ տրամադրելու և հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման պետական տուրքի դրույքաչափերը, ինչը առողջարանի յուրաքանչյուր աստղի համար կազմում է տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով⁵: Ներկայումս ՀՀ-ում կան որակավորված հյուրանոցային տնտեսության 31 օբյեկտներ, որոնք հիմնականում հյուրանոցներ են և զբոսաշրջային տներ, և դրանց ցուցակում չկա ոչ մի առողջարան:

ՀՀ-ում առողջարաններին գործունեության լիցենզիա տրամադրում է առողջապահության նախարարությունը՝ համաձայն ՀՀ Կառավարության կողմից 2001 թ. ընդունված «Լիցենզավորման մասին» օրենքի և 2002 թ. հունիսի 29-ի N 867 որոշմամբ ընդունված «ՀՀ-ում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգի»: Պետք է նշել, որ բժշկական օգնության և սպասարկման իրականացման համար լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով և անժամկետ: Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով, ինչը կազմում է բազային տուրքի 50-ապատիկը⁶: Բարդ լիցենզիան տրվում է օրենքով և կարգով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում⁷:

Բժշկական օգնության և սպասարկման լիցենզիան տալու համար կարող է կատարվել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգում, ինչպես նաև լիցենզիա ստացած անձը պարտավոր է լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացնել միայն լիցենզիայում նշված վայրում⁸:

Ներկայումս առողջարանային ծառայություններ մատուցելու լիցենզիա ունեն հետևյալ 13՝ Ջերմուկի «Օլիմպիա», «Արարատ» մոր և մանկան, «Ջերմուկ աշխարհ», «Գլաձոր», «Արմենիա», «Ջերմուկ N 1», Ծաղկաձորի «Ռիպա», Սևանի «Արևիկ», Արզնիի «Արզնի», Հանքավանի «Խոտորջուր», Արզականի «Գանձաղբյուր», Դիլիջանի «Իմպուլս» առողջարանները, Վանաձորի հյուրանոցային և առողջարանային-վերականգնողական համալիրը⁹: Նշված առողջարաններից բացի գործում է նաև Դիլիջանի «Լեռնային Հայաստան» առողջարանը՝ ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայությամբ:

ՀՀ-ում առողջարանային զբոսաշրջության զարգացման նպատակով մշակվել են պետական ծրագրեր: Այսպես՝ 2003 թ. ՀՀ Կառավարության որոշմամբ ընդունվեց «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների 2004-2008 թվականների հեռանկարային զարգացման

⁴ Հյուրանոցատիպ հանգրվանների և առողջարանների որակավորման կարգ, ՀՀ Կառավարության 2004 թ. հունիսի 10-ի N946-Ն որոշման հավելված N 3:

⁵ Տե՛ս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.2.2.դ. կետ՝ ընդունված 1997 թ.:

⁶ Տե՛ս նույն տեղը, 2.2.5 կետ:

⁷ Տե՛ս «ՀՀ-ում կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման լիցենզավորման կարգ», ՀՀ Կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշում:

⁸ Տե՛ս ՀՀ օրենքը «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 2010 թ.:

⁹ Աղբյուրը՝ ՀՀ առողջապահության նախարարության լիցենզավորման վարչության տրամադրած տվյալներ:

ծրագիրը», որի հիմնական նպատակն էր Հայաստանում ժամանակակից բարձր արդյունավետությամբ և մրցունակ կուրորտային համակարգի ստեղծումն ու կուրորտային զբոսաշրջության զարգացումը¹⁰:

Ծրագրի իրականացման համար նախատեսվում էին հետևյալ միջոցառումները.

1. ոլորտը կարգավորող առկա օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և կատարելագործում, կուրորտային բնակավայրերի հստակեցում,
2. կուրորտային վայրի ռեսուրսների ճշգրիտ գնահատման նպատակով մանրակրկիտ գույքագրում,
3. կուրորտային վայրերի սահմանների և գործառնական գոտիների նախագծում, քաղաքաշինական փաստաթղթերի մշակում,
4. մարքեթինգային քաղաքականության իրականացում,
5. ներդրումային քաղաքականության իրականացում, կուրորտների զարգացման ներդրումային առաջարկների պատրաստում, ներկայացում և տարածում հնարավոր ներդրողների ներգրավման նպատակով,
6. կրթական համակարգի ձևավորում, ներառյալ՝ մասնագետ կադրերի պահանջարկի որոշման խնդիրները և անհրաժեշտ մասնագիտությունների ցանկի սահմանումը, կրթական ծրագրերի և մեթոդական ձեռնարկների մշակումը, նոր մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը,
7. ոլորտի գիտական ապահովում՝ գիտական բազայի կատարելագործման և ժամանակակից նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով:

Նշենք սակայն, որ ծրագրով նախատեսված միջոցառումները չեն իրականացվել ֆինանսական խնդիրների պատճառով, որոնք արդիական են մինչ օրս:

ՀՀ Կառավարությունը 2009 թ. հուլիսի 16-ի նիստի N 29-Ն արձանագրային որոշմամբ հաստատեց «Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012 թթ. ռազմավարությունը»՝ համաձայն «Ջերմուկ քաղաքը զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին» ՀՀ Կառավարության 2008 թ. սեպտեմբերի 18-ի N 1064-Ն որոշման: Ռազմավարության հիմքում հետևյալ հայեցակարգային նպատակներն են. մինչև 2020 թվականը՝

1. Ջերմուկ քաղաքը դարձնել ամբողջ տարին գործող, միջազգային չափանիշներին համապատասխանող, առողջ և ակտիվ կենսակերպի զբոսաշրջային կենտրոն՝ այն զարգացնելով որպես.

- առողջարանային և ձմեռային զբոսաշրջության կենտրոն՝ այլընտրանք եվրոպական կենտրոններին,
- շախմատի միջազգային մրցաշարերի կազմակերպման կենտրոն,
- համահայկական և միջազգային մանկապատանեկան և երիտասարդական ճամբարատեղի,
- մշակութային զբոսաշրջության կենտրոն՝ տարեկան 100000 զբոսաշրջային այցելություն,

2. մեծացնել զբոսաշրջությունից ստացվող եկամուտները՝ հասցնելով մինչև 100 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի,

¹⁰ Տե՛ս «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների 2004-2008 թվականների հեռանկարային զարգացման ծրագիր», 2003 թ.:

3. ապահովել 4000 աշխատատեղ:

Առողջարանային զբոսաշրջությանն առնչվող՝ ռազմավարությամբ սահմանված միջոցառումները վերաբերում էին.

1. հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերանորոգմանն ու կահավորմանը,

2. կառավարման արդիական ձևերի կիրառմանը,

3. հյուրերին մատուցվող սննդի տեսականու և որակի բարելավմանը,

4. հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորմանը,

5. առողջարաններում բուժական ծառայությունների և առողջարանային բուժումների համար օգտագործվող սարքավորումների ու հարմարությունների բարելավմանն ու արդիականացմանը (Եվրոպայի լավագույն առողջարանների օրինակով),

6. Ջերմուկում զբոսաշրջության արդյունաբերությանը հարող ու օժանդակող արդյունաբերության ոլորտների որակի ու բազմազանության բարելավմանը,

7. Ջերմուկի ուրույն ապրանքային նշանի մշակմանը և քաղաքը որպես զբոսաշրջային կենտրոն գովազդելուն, զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության արդիականացմանը,

8. առկա ենթակառուցվածքների բարելավմանը և այլն:

Կատարվել են հետևյալ գործողությունները¹¹.

– Հյուրանոցային տնտեսության օբյեկտների և այլ շինությունների արտաքին և ներքին տեսքի, հաստատությունների շրջակա տարածքների, հաշմանդամների համար հաստատությունների մատչելիության և այլ չափանիշներ քննարկվել են շվեյցարական «Թայգեր Դև» ընկերության և շահագրգիռ կողմերի հետ՝ ներառելով քաղաքի գլխավոր հատակագծային առաջարկություններում:

– 2009 թ. կազմակերպվել է EuropeSPA Եվրոպական առողջարանների ասոցիացիայի գլխավոր քարտուղարի և որակի կառավարման պատասխանատուի այցը Հայաստան: Այցի արդյունքում ասոցիացիայի կողմից տրվել է հաշվետվություն քաղաքի ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև Հայաստանի և ասոցիացիայի հետագա համագործակցության հեռանկարների վերաբերյալ: Կազմակերպվել է նաև երկու սեմինար Երևան և Ջերմուկ քաղաքներում՝ Հայաստանում գործող առողջարանների ներկայացուցիչների մասնակցությամբ:

– Ջերմուկի զբոսաշրջային գրավչությունները գովազդելու նպատակով մշակվել են տեղեկատվական և գովազդային նյութեր՝ ուղեցույցներ, բուկլետներ, քարտեզներ, սկավառակներ: Քաղաքն ընդգրկված է նաև իսպանական Buzz Business ու Transglobe ընկերությունների հետ համատեղ նկարահանված՝ «Հայաստան՝ Նոյի երկիր» և լեհական 2-րդ ազգային հեռուստաընկերության «Մակլովիչի ճանապարհորդությունները» ծրագրի հետ համատեղ ստեղծված՝ Հայաստանի խոհանոցն ու մշակույթը ներկայացնող ֆիլմերում,

– բարեկարգվել են Ջերմուկի փողոցների մայթերը, խճուղիները և հանրային վայրերը, վերանորոգվել են 31 կմ երկարությամբ ներհամայնքային

¹¹ Աղբյուրը՝ Հաշվետվություն Ջերմուկ քաղաքի զարգացման 2009-2012 թվականների ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսված 2009-2011 թթ. ընթացքում իրականացված միջոցառումների վերաբերյալ:

ճանապարհները, ամբողջությամբ լուսավորված են քաղաքի փողոցները:

Փաստորեն, ծրագրով նախատեսված մի շարք միջոցառումներ դեռևս չեն իրականացվել, մասնավորապես՝ ոչ մի առողջարան չի ստացել որակավորման կարգ, չեն վերանորոգվել առողջարանները, չեն արդիականացվել դրանց բուժական սարքավորումները Եվրոպայի լավագույն առողջարանների օրինակով:

Հայաստանում զբոսաշրջության ոլորտի պետական կառավարման համակարգի վերլուծությունից պարզ է դառնում, որ թերի է առողջարանային վերականգնողական զբոսաշրջությանը վերաբերող օրենսդրական դաշտը, չկան համապատասխան օրենքներ, զարգացման ծրագրեր, իսկ եղածներն էլ ամբողջությամբ չեն իրագործվել: Մասնավորապես՝ բացակայում են բնական բուժիչ ռեսուրսների և կուրորտների օգտագործման, տվյալ ոլորտում ներդրումային հարաբերությունները կարգավորող համապատասխան օրենքներ, զարգացման հայեցակարգ, ռազմավարական՝ զարգացման և մարքեթինգային միջոցառումների ծրագրեր և այլն: Կարծում ենք՝ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ ոլորտի օրենսդրաիրավական դաշտը կատարելագործելու նպատակով:

Մենք մշակել և առաջարկում ենք հետևյալ հայեցակարգը:

Հայաստանում կան 10 կուրորտային գոտիներ, որոնք ունեն առողջարանային բուժման և հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր բնական բուժիչ ռեսուրսները՝ հանքային ջրեր, բուժիչ ցեխեր և տորֆեր, կլիմայաբուժության նպաստավոր պայմաններ: ՀՀ կուրորտների բուժառողջարարական ռեսուրսներն իրենց հատկություններով համեմատվում են հանրահայտ միջազգային առողջարանների հետ. այսպես՝ Ջերմուկը՝ Չեխիայի Հանրապետությունում գտնվող Կարլովի Կարիի և Ռուսաստանի Ժելեզնովոդսկի հետ: Ջերմուկի որոշ հորատանցքերի ջրեր իրենց բաղադրությամբ նման են Մաշուկի (Պյատիգորսկ) ջրերին: Դիլիջանում կան Բորժոմի և Վիչի (Ֆրանսիա) հանքային ջրերին համանման հանքային ջրերի մեծ պաշարներ, որոնք ունեն բուժական, առողջարարական, վերականգնողական հիանալի հատկություններ: Դիլիջանի բուժառողջարարական ռեսուրսներն իրենց հատկություններով շատ մոտ են, իսկ որոշ ցուցանիշներով գերազանցում են այնպիսի հանրահայտ առողջարանների, ինչպիսիք են Բորժոմին, Աբասթուանը, Կիսլովոդսկը, Եսենտուկին, Պյատիգորսկը և այլն: Արզնի կուրորտը միակն է տարածաշրջանում և նախկին ԽՍՀՄ-ում՝ սրտի իշեմիկ հիվանդության բուժման, հետինֆարկտային և հետինսուլտային վերականգնման համար:

Մեր կուրորտային գոտիների բնական բուժիչ ռեսուրսների և առողջարանային զբոսաշրջության զարգացման ներուժի արդյունավետ ու խելամիտ օգտագործումը թույլ կտա դրանք դարձնել խոշոր միջազգային կուրորտներ՝ ներգրավելով զբոսաշրջիկների աշխարհի տարբեր վայրերից: Արդյունքում՝ Հայաստանը կարող է դառնալ կուրորտային զբոսաշրջության երկիր ոչ միայն տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում:

Հայաստանում կարելի է առանձնացնել հետևյալ կուրորտային գոտիներն իրենց հիմնական բուժիչ գործոններով.

1. Արզնի հանքաջրաբուժական կուրորտ. միջլեռնային շրջային հարմարավետ լանդշաֆտային-կլիմայական պայմաններ և սառը, բուժիչ հանքային ջրեր,

2. Դիլիջանի լեռնակլիմայական, հանքաջրաբուժական կուրորտ. լեռնային շրջայի բարենպաստ լեռնանտառային կլիմայական պայմաններ և սառը, ածխաթթվային բուժիչ հանքային ջրեր,
3. Հանքավան – Մարմարիկ հանքաջրաբուժական կուրորտ. բարձր լեռնային գոտու բարենպաստ լանդշաֆտակլիմայական պայմաններ՝ մաքուր օդ՝ հարուստ թթվածնով և անտառային հոտով, ինչպես նաև ջերմային, ածխաթթվային հանքային ջրեր,
4. Բջնի – Արզական – Աղվերան բալնեոկլիմայական կուրորտ. մեղմ, բարենպաստ կլիմա, հարուստ անտառային ծածկ, տարբեր ֆիզիկաքիմիական, գազային բաղադրությամբ բազմաթիվ հանքային աղբյուրներ,
5. Ստեփանավան – Գյուլագարակ լեռնակլիմայական, հանքաջրաբուժական կուրորտ. չափավոր սառը, անտառային կլիմա, հարուստ բուսականություն, անտառային զանգված, մաքուր օդ, ածխաթթվային հանքային ջրեր,
6. Ծաղկածորի լեռնակլիմայական կուրորտ. բարենպաստ լեռնանտառային կլիմա, հսկայական անտառային ծածկի և լեռնային մարգագետինների առկայություն, թեթև իոններով օդի հագեցվածություն և էկոլոգիապես մաքուր մթնոլորտային օդում թթվածնի պարունակության բարձր աստիճան,
7. Սյունիքի լեռնակլիմայական կուրորտ. բարենպաստ կլիմա, հանքային ջրերի աղբյուրներ,
8. Լոռու կուրորտային գոտի. բարենպաստ լեռնանտառային կլիմա, հանքային ջրերի աղբյուրներ, բուժիչ տորֆի հանքաշերտեր,
9. Սևանա լճի ավազանի բալնեոկլիմայական կուրորտային գոտի. բարենպաստ լանդշաֆտակլիմայական պայմաններ, հանքային ջրերի աղբյուրներ, բուժիչ տորֆի հանքաշերտեր,
10. Ջերմուկի կլիմայաբալնեոլոգիական կուրորտ. չափազանց ջերմային, ածխաթթվային, հանքային ջրեր և բարձր լեռնային, անտառային կլիմա:

Այս կուրորտային գոտիներում գործող առողջարաններում բուժում են մի շարք հիվանդություններ.

- Ջերմուկում՝ ստամոքս-աղիքային, նյարդային, միզասեռական, զինեկոլոգիական, շնչառական, հենաշարժական համակարգի, նյութափոխանակության խանգարումներ և այլն,
- Արզնիում՝ սրտի իշեմիկ հիվանդություն ինֆարկտից հետո, առաջին և երկրորդ աստիճանների հիպերտոնիա, արյունատար անոթների աթերոսկլերոզ, գլխուղեղի արյան շրջանառության խախտումներ, ինսուլտի հետևանքներ,
- Հանքավանում՝ աղեստամոքսային, զինեկոլոգիական, լյարդի, հենաշարժական ապարատի, նյարդային համակարգի, ստոմատոլոգիական և տարբեր մանկական հիվանդություններ,
- Վանաձորում՝ աղեստամոքսային, զինեկոլոգիական, ծայրամասային նյարդային համակարգի, հենաշարժական ապարատի, շագանակագեղձի բորբոքման, ողնաշարի, ստոմատոլոգիական հիվանդություններ, ռադիկուլիտ,

- Սևանում՝ ալերգիկ, բերանի խոռոչի լորձաթաղանթի, ծայրամասային նյարդային համակարգի, հենաշարժական ապարատի, ողնաշարի, քիթ-կոկորդ-ականջի, օրթոպեդիկ հիվանդություններ, բրոնխային ասթմա, հայմոռիտ:

Անհրաժեշտ է նշել սակայն, որ Հայաստանի ոչ բոլոր կուրորտային գոտիներում կան առողջարաններ, եղածների որոշ մասը ներկայումս չի գործում, իսկ գործողները ցածր սեզոնին աշխատում են թերբեռնված:


Հայեցակարգի հիմնական նպատակը մրցունակ կուրորտային համալիրի ձևավորման և առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար պայմանների ստեղծումն է:

Կուրորտային համալիրի զարգացումը կնպաստի ներքին և ներգնա առողջարանային զբոսաշրջության զարգացմանը, բնակչության առողջական վիճակի լավացմանը, կուրորտային գոտիներում բնակչության զբաղվածության ապահովմանը, կուրորտային ենթակառուցվածքի զարգացման հաշվին բնակչության կենսապայմանների բարելավմանը, տարածաշրջաններում փոքր բիզնեսի զարգացմանը (առևտրի կետեր, սրճարաններ և այլն), հարկային մուտքերի մեծացմանը, երկրի պատմամշակութային ժառանգության պահպանմանը:

Հայաստանում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության խթանումը կնպաստի զբոսաշրջային բազմարկչի աճին, ՀՆԱ-ում տվյալ ոլորտի մասնաբաժնի մեծացմանը, առողջարանային զբոսաշրջիկների թվի ավելացմանը, կուրորտային գոտիներում բնակչության զբաղվածության աճին:

Հայաստանում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներն են.

1. երկիրը՝ որպես կուրորտային տարածաշրջան, վատ է ներկայացված աշխարհում,
2. ցածր սեզոնին առողջարաններն աշխատում են թերբեռնված, իսկ որոշները գործում են միայն ամռան ամիսներին,
3. առողջարանների մեծ մասում առկա են վերանորոգման դժվարություններ,
4. ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը և վիճակագրական հաշվառումը թերի են,
5. առողջարանային ծառայությունների գները բարձր են, արդյունքում՝ երկրի բնակչության ցածր և միջին խավի համար առողջարանային հանգիստն անհասանելի կամ քիչ հասանելի է,
6. Հայաստանի 10 կուրորտային գոտիներից ոչ բոլորում կան առողջարաններ,
7. առողջարանների մարքեթինգային գործունեության ցածր մակարդակը,
8. առողջարանային զբոսաշրջիկների փոքր թիվը, դրանում դրսից ժամանածների ոչ մեծ մասնաբաժինը,
9. ենթակառուցվածքների թերզարգացումը:



Պատկեր 1. Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման հայեցակարգ

ՀՀ-ում առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները.

Աղյուսակ 1

Հայեցակարգից բխող անհրաժեշտ միջոցառումներ

<i>Միջոցառումներ</i>	<i>Միջոցառումների նկարագիրը</i>
ՀՀ կուրորտային զբոսաշրջության արդյունքի ներկայացում միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում	<ol style="list-style-type: none"> մասնակցել միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ ներկայացնելով կուրորտային արդյունքը ձևավորել և իրականացնել գովազդային ծրագրեր կիրառել էլեկտրոնային գովազդի տարրեր
Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության վիճակագրական հաշվառման գործընթացի և օրենսդրական դաշտի բարելավում	<ol style="list-style-type: none"> քայլեր ձեռնարկել ոլորտի վիճակագրական հաշվառման բարելավման ուղղությամբ ձևավորել ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտ մշակել ոլորտի զարգացման ծրագրեր մշակել առանձին կուրորտային գոտիների զարգացման ծրագրեր
Առողջարանային հանգստի ծառայությունների գնի և որակի ցուցանիշների բարելավում	<ol style="list-style-type: none"> բարձրացնել առողջարանային ծառայությունների որակը, սպասարկման մակարդակը քայլեր ձեռնարկել առողջարանային հանգստի գների նվազեցման ուղղությամբ կիրառել առողջարանային երկարատև հանգիստը խթանող գնային զեղչերի քաղաքականություն
Գործարար, ներդրումային միջավայրի բարելավում	<ol style="list-style-type: none"> նպաստել ներդրումների ներգրավմանը՝ հին առողջարանները վերանորոգելու, նոր առողջարաններ կառուցելու և ենթակառուցվածքների զարգացման նպատակով,

	2. ստեղծել զբոսաշրջությունից ստացված եկամուտներից զբոսաշրջավայրերի զարգացմանը տրամադրվող հատկացումների մեխանիզմ
Ոլորտի զարգացման գիտականության ապահովում	1. պատրաստել ոլորտի զարգացմանն անհրաժեշտ գիտական կադրեր, 2. բարձրացնել ոլորտի աշխատողների գիտական մակարդակը, կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ

Հայեցակարգի գործադրումը կնպաստի կուրորտային ենթակառուցվածքի զարգացմանը, առողջարանային ծառայությունների որակի և կուրորտային համալիրի մրցունակության բարձրացմանը: Դրա հիմնական դրույթների իրականացման համար հարկ է մշակել առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացման մարքեթինգային ծրագիր՝ նշելով անհրաժեշտ միջոցառումները, դրանց իրականացման ժամկետները, ակնկալվող արդյունքները, ֆինանսավորման աղբյուրները և ծավալները:

Հայեցակարգից բացի առաջարկում ենք նաև ձևավորել ոլորտի օրենսդրական դաշտը՝ հետևյալ երեք հիմնական օրենքներով.

1. *«Բնական բուժիչ ռեսուրսների և առողջարանային-վերականգնողական գոտիների (կուրորտների) մասին» ՀՀ օրենք*, որով կկարգավորվեն ՀՀ բնական բուժիչ ռեսուրսների և կուրորտների օգտագործման, կազմակերպման և պահպանման ոլորտում առաջացող հարաբերությունները, կսահմանվեն բնագավառի կարգավորման պետական քաղաքականության սկզբունքները, Կառավարության, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, կապահովվեն կուրորտային բուժման և հանգստի տնտեսական, սանիտարական համապատասխան պայմանները, կմշակվեն բնական բուժիչ ռեսուրսների և կուրորտների արդյունավետ օգտագործման ու զարգացման միջազգային համագործակցության քաղաքականությունն ու հիմնական ուղղությունները և այլն:

2. *«Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք*, որով կկարգավորվեն տվյալ բնագավառին առնչվող հարաբերությունները, կսահմանվեն հիմնական հասկացությունները, պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, հիմնական միջոցառումները, Կառավարության լիազորած պետական մարմնի իրավասությունները, համագործակցությունը հասարակական, միջազգային կազմակերպությունների հետ, առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության կազմակերպման հիմնական սուբյեկտների իրավունքներն ու պարտավորությունները և այլն:

3. *«Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության ոլորտում ներդրումային գործունեության մասին» ՀՀ օրենք*, որով պետությունը կսահմանի այս ոլորտում ներդրումային գործունեության հիմնական սկզբունքները, կկարգավորվեն ոլորտի ներդրումային հարաբերությունները, կմշակվեն ներդրումների իրականացման համար տրվող արտոնությունները և այլն: Բնագավառում բարենպաստ ներդրումային միջավայր ձևավորելու համար անհրաժեշտ են օրենքով սահմանվող համապատասխան խթաններ, ինչպիսիք են՝ սարքավորումների ներմուծման դեպքում մաքսերից ազատում, վարկեր արտոնյալ պայմաններով, դրանց երաշխավորում, հողի, կառույց-

ների, տրանսպորտի օգտագործում, էլեկտրականության ու ջրամատակարարման ապահովում՝ շուկայականից ցածր գներով և այլն:

Նշված օրենքների ընդունումը թույլ կտա առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության զարգացումը դնել ամուր հիմքերի վրա՝ օրենսդրորեն կանոնակարգելով համապատասխան հարաբերությունները:

Ոլորտի զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև գիտական կադրերի պատրաստումը: Ներկայումս Հայաստանի որոշ բուհերում պատրաստում են զբոսաշրջության կառավարման մասնագետներ: Կարևորելով առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության դերն ու նշանակությունը Հայաստանի զբոսաշրջային համակարգում, դրա սոցիալական ու առողջապահական նշանակությունը երկրի բնակչության համար՝ անհրաժեշտ ենք համարում բուհերում «Զբոսաշրջության կառավարում» մասնագիտացմամբ բաժիններում ներդնել առանձին դասընթաց՝ «Կուրորտային զբոսաշրջության կազմակերպում և կառավարում», որի հիմնական խնդիրը կլինի ուսումնասիրել և վերլուծել ոլորտի առկա խոչընդոտները, դրանց լուծման ուղիները, կառավարման հիմնահարցերը և այլն: Կարծում ենք՝ այս դասընթացը կօգնի անհրաժեշտ մասնագետների պատրաստմանը՝ նպաստելով կուրորտային համալիրի և կուրորտային զբոսաշրջության զարգացմանը:

ГАЯНЕ ТОВМАСЯН

Аспирант кафедры „Менеджмента” АГЭУ

Система управления курортно-оздоровительного туризма и развитие концептуальных основ в РА.-

В Армении органом государственного управления туризма является Министерство Экономики, которое разрабатывает и осуществляет государственную политику в этой сфере.

В статье представлены основные принципы и цели государственной политики в сфере туризма, система управления курортного туризма.

Так как нормативная база управления курортного туризма недостаточна, по этому поводу предлагаем разработать концепцию развития санаторно-курортного туризма и следующие основные законы:

1. „О природных лечебных ресурсах и курортах”,
2. „О санаторно-курортном туризме”,
3. „О инвестиционной деятельности в санаторно-курортной сфере”.

Также предлагаем новую дисциплину в вузах: „Организация и управление курортного туризма”.

GAYANE TOVMASYAN

Post-graduate at the Chair of „Management” at ASUE

The Management System and the Conceptual Basis for the Development of SPA-Resort Tourism in the RA.-

The body of state regulation in the tourism sphere is the Ministry of Economy in Armenia, which develops and implements state policy in this sphere.

The main principles and goals of tourism state policy and the management system of resort tourism are presented in the article.

As the legislative base of resort tourism management is incomplete, we offer to work out a conception for the development of spa-resort tourism and to develop these main laws:

1. „About natural curable resources and resorts”,
2. „About spa-resort tourism”,
3. „About investment performance in the spa-resort sphere”.

A new subject is also suggested about “Organisation and management of spa-resort tourism” in the universities.

